ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

13 սեպտեմբերի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

128
(2794)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԽԱՂԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ Է ՔԱՐՈԶՈՒՄ

ՀՀ ԱԺ իշխանական խմբակցության մի խումբ պատգամավորներ կան, որ ամեն նստաշրջանին տարբեր օրենքներ են բերում՝ իբրեւ թե խաղամոլության դեմ պայքարի շրջանակներում, սակայն խաղամոլության թվերը մեր երկրում շարունակում են աճել, իսկ խաղամոլության գովազդն ու հնարավորությունը մարդկանց հեռուստաէկրաններից ներս է մտել տներ: «Ժողովուրդ» օրաթերթը արձանագրել է շարքային երեւանցու բնակարանում «Վիվառո» ընկերության կողմից առաջարկվող կոնկրետ շահումով խաղերի հնարավորությունը: Այսինքն՝ խաղամոլությունը մարդկանց տներում է խթանվում, ու հետաքրքիր զուգադիպությամբ խթանվում են միայն Նիկոլ Փաշինյանի իշխանության հովանավորությունը վայելող «Վիվառո» ընկերության առաջարկած խաղերը: Հեռակառավարման վահանակի միջոցով մտնում ենք հեռուստացույցում առաջարկվող ծրագրերի բաժինը, իջնում ներքեւ, ապա՝ աջ, եւ սեղմում «Վիվառո»-ի առաջարկած պատուհանը. բացվում են խաղեր: Կոնկրետ «Պոկեր»-ը առաջարկվում է դերասան Հովհաննես Ազոյանի դեմքով, մյուսներն այլ լուծումներ ունեն: Դուք կարող եք տեսնել, թե ինչպես է հնարավոր հեռակառավարման վահանակի միջոցով շահումով խաղերը դարձնել հասանելի հենց տնից: Իսկ ի՞նչ է անում իշխանությունը:

ՔՊ-ական պատգամավոր Հրաչյա Հակոբյանն ԱԺ ամբիոնից խորհուրդ էր տալիս, որ կարելի է այդ ժամանակը օգտագործել՝ համացանցում ինչ-որ բան սովորելով, գիրք կարդալով, բայց հաստատ ոչ տանը նստած կազինո խաղալով:

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը հայտարարում էր, որ շահումով խաղերի գովազդը հենց արգելվի լրատվական կայքերում, խաղամոլության դեմ պայքարը կհաջողի:

ՔՊ-ական պատգամավորները, երբ ազատ ժամանակ են ունենում, խաղամոլության դեմ պայքարի անվան տակ ինչ-որ օրենքներ են բերում: Գեւորգ Պապոյանն էլ ներկայացրել է օրենքի նախագիծ, որով սահմանվում է՝ լրատվամիջոցները, որոնց անվանումը կապ ունի կամ նման է շահումով խաղի, վիճակախաղի, օնլայն կազինոյի անվան հետ, պետք է փոխեն իրենց անվանումը: Թերեւս այդ օրենքն էլ դեռ չի գործում. «Վիվառո» անունով հեռուստաալիքը դեռ կա: Մինչդեռ, Գեւորգ Պապոյանը շարունակում է ընդգծել, որ կայքերից շահումով խաղերի գովազդները արգելելը վարչապետի ուղիղ հանձնարարությունն է:

Իսկ ի՞նչ պատկեր ունենք իրականում. Ազգային ժողովի կողմից ընդունված տարբեր սահմանափակումներից հետո խաղամոլության ծավալները Հայաստանում ոչ թե նվազել են, այլ կտրուկ աճել: Խոսենք թվերով. 2017թ.-ին 138,5 մլրդ դրամի խաղադրույք է կատարվել Հայաստանում, 2018թ.-ին այդ թիվն աճել է՝ դառնալով 333,6 մլրդ դրամ, 2019թ.-ին հատել է 1 տրիլիոնի շեմը, 2020թ.-ին՝ մոտ 2 տրլն դրամ, 2021-ի ամբողջ տարում 3,9 տրլն դրամից ավելի խաղադրույք է կատարվել: 2022թ.-ի հունվարից նոյեմբեր՝ 9 ամիսներին, 5,3 տրլն դրամի խաղադրույք է կատարվել Հայաստանում: Սա պատմական ռեկորդային թիվ է, ու սա է հեղափոխական թիմի սիրողական պայքարը խաղամոլության դեմ, մինչդեռ Նիկոլ Փաշինյանը 2023 թ. հունվարի 10-ին հայտարարում էր, թե իրենց իշխանության կողմից շահումով խաղերի ոլորտում կատարված օրենսդրական սահմանափակումների արդյունքում խաղադրույքների ոլորտում լուրջ անկում է գրանցվել: «..Բացի այդ, հիմա խաղադրույք կատարելը էդքան հեշտ չէ, ինչքան նախկինում: Մենք այսօր տեսնում ենք, որ խաղադրույքների ոլորտում սենց շա՛տ լուրջ անկում կա»,- պնդել էր վարչապետ Փաշինյանը:



«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության շատ անդամներ ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Լիլիթ Մակունցի հետ լարվել են: Բանն այն է, որ Մակունցը ԱՄՆ տեղափոխվելուց հետո կապը կտրել է բոլոր ՔՊ-ականների հետ. ինչպես իշխանական մեր աղբյուրներն են պատմում, եթե նախկինում որեւէ հարց էր լինում, դիմում էին Լիլիթ Մակունցին, նա անպայման ընդառաջում էր թիմակիցներին, կատարում էր նրանց խնդրանքը, բայց հիմա Մակունցն այլեւս առաջվանը չէ: Նախկին խմբակցության անդամների հետ չի շփվում, անգամ շատերի զանգերին չի պատասխանում, միայն իշխանական վերնախավի հետ է շփվում, ավելի կոնկրետ՝Նիկոլ Փաշինյանի, նրան է զեկուցում ամեն ինչ, նրանից է հրահանգներ ստանում, Արարատ Միրզոյանի հետ շփվում է ի պաշտոնե՝ որպես արտգործնախարարի: Սրանից ՔՊ-ականները խիստ վրդովվել են, ասում են, որ երբ աշխատանքային այցով տարբեր երկրներ են գնում, դեսպանները գրկաբաց ընդունում են իրենց, ուղեկցում ժամանցի վայրերով, խանութներով, մինչդեռ Մակունցը շատ դեպքերում չի դիմավորում, սառն է: ՔՊ-ականների համար տարօրինակ է Լիլիթ Մակունցի այս պահվածքը, քանի որ նա թիմում այն քչերից է եղել, որ բոլորի հետ լավ հարաբերություններ է ունեցել, մինչդեռ հիմա դարձել է արհամարհող: Պարզվում է՝Մակունցի հետ իշխանականների հարաբերությունների լարումը այլ՝ ավելի խորը պատճառներ ունի: «Ժողովուրդ» օրաթերթն այս տեղեկությունը ճշտելու համար փորձեց կապ հաստատել Լիլիթ Մակունցի հետ՝ուղարկելով պաշտոնական գրություն այն մասին, թե ՀՀ Ազգային ժողովից, ՀՀ կառավարությունից կամ այլ գերատեսչություններից, պետական կառույցներից ովքեր են դիմել ամերիկյան «GreenCard» ստանալու համար, եւ արդյոք ճիշտ է այն տեղեկությունը, թե Մակունցը, տեղյակ լինելով այս ցանկում ներառված անձանց մասին, ցուցակը փոխանցել է Նիկոլ Փաշինյանին՝ տեղեկացնելով, թե կոնկրետ քանի պաշտոնյա է դիմել խաղարկային ձեւով վիզա ստանալու եւ Հայաստանը լքելու համար: Շուրջ մեկ ամիս սպասելով պատասխանի Լիլիթ Մակունցից, պարբերաբար նրա էլեկտրոնային հասցեին հիշեցումներ ուղարկելով՝միեւնույնն է, արժանացանք նույն լռությանը, ինչ ՔՊ-ական շատ պատգամավորներ: «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց նաեւ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հետ՝ճշտելու, թե ՀՀ Ազգային ժողովից, ՀՀ կառավարությունից կամ այլ գերատեսչություններից, պետական կառույցներից ովքեր են դիմել «GreenCard» ստանալու համար, սակայն մեզ տեղեկացրին, որ դա փակ տեղեկություն է, եւ իրենք իրավասու չեն տրամադրելու: Այսպիսով, իշխանական շատ գործիչներ այս շրջանում շատ են դիմում ԱՄՆ վիզա ստանալու կամ «GreenCard» շահելու համար, եւ երբ ցանկը Մակունցը տրամադրել է Փաշինյանին, թիմը լարվել է նրա դեմ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ՔՊ-ականներին հրահանգ է իջեցվել քարոզարշավի վերջին շաբաթը «կատաղի» պայքարի դուրս գալ ու ամբողջ ուժերը կենտրոնացնել միայն ու միայն ձայներ հավաքելու վրա՝ չխնայելով ոչ մի մեթոդ: ՔՊ-ն այս շաբաթ իր ամբողջ ծանր հրետանին ոտքի է հանել. նախարարները, բոլոր պատգամավորները մեկ մարդու պես աշխատանքային ժամից հետո պետք է շտապեն քարոզարշավի. անգամ այն պատգամավորները, որոնք մինչ այս չէին մասնակցում քարոզարշավին, այս շաբաթ նրանք էլ ոտքի կելնեն: Բանն այն է, որ որքան ընտրությունները մոտենում են, այնքան իշխանականների վախերն ու անհանգստությունները մեծանում են, քանի որ տարբեր ներքին հարցումներն էլ ցույց են տալիս, որ, առանց վարչական ռեսուրսի կոշտ կիրառման, չեն կարող իրենց ուզած արդյունքին հասնել ու Երեւանում միանձնյա իշխանություն ստանձնել: Նրանց շատ է անհանգստացնում Հայկ Մարությանի բարձր վարկանիշը, որը իջեցնելու համար անգամ Նիկոլ Փաշինյանը երկու անգամ հարցազրույց տվեց Հանրայինով՝ մեկն իր աշխատասենյակում. ԿԸՀ-ից հուշեցին, որ դա ընտրախախտում է, եւ զրույցը կազմակերպվեց Հ1-ի տաղավարում:

ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ծովինար Սողոմոնյանը, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի N 934-Ա որոշմամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, 2023 թվականի սեպտեմբերի 15-ից ազատվելու է պաշտոնից: Սողոմոնյանը ՊԵԿ նախագահի տեղակալի պաշտոնին նշանակվել էր 2021 թվականի հոկտեմբերի 6-ին: Նա համատեղ սեփականությամբ հայտարարագրել է մեկ բնակարան բազմաբնակարան շենքում եւ մեկ ավտոտնակ, որոնք ձեռք է բերել 2019 թվականին Երեւանի Արաբկիր վարչական շրջանում: ՊԵԿ նախագահի արդեն նախկին տեղակալ Սողոմոնյանը մեկ բնակարան էլ հայտարարագրել է Կենտրոն վարչական շրջանում, որը փաստացի պատկանում է այլ անձի, սակայն շահագործվում է նրա կողմից: Ուսումնասիրելով հայտարարագիրը՝հասկացանք, որ Կենտրոնում գտնվող բնակարանը եւս գնված է հիփոթեքով: Ծովինար Սողոմոնյանը մինչ պաշտոնը ստանձնելն ունեցել է մեկ մեքենա՝2001 թվականի արտադրության, HONDA մակնիշի, սակայն պաշտոնը ստանձնելուց հետո՝2022 թվականին, նա 1մլն 900 հազար դրամով ձեռք է բերել 2015 թվականի արտադրության, HYUNDAI մակնիշի մեքենա: Սողոմոնյանի բանկային ավանդները կազմել են 2 հազար 500 դոլար եւ 900 հազար դրամ, բանկային հաշիվների մնացորդները կազմել են 464 հազար դրամ: Նրա հաշվետու տարվա եկամուտները կազմել են 16 մլն 211 հազար դրամ, որը աշխատանքի վարձատրություն է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից: Նախկին տեղակալի ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 54 մլն 310 հազար դրամ, որը 2 բնակարանների եւ մեկ ավտոտնակի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է: Վարկի մարմանն ուղղել է 7 մլն 379 հազար դրամ: Հիշեցնենք, որ Ծովինար Սողոմոնյանը նախկինում եղել է ֆինանսատնտեսագիտական վարչության պետ ՀՀ կառավարության աշխատակազմում, դրանից հետո նա եղել է ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ: Շարունակելով տեղակալի կարիերան՝նա նշանակվել է ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ:

ԶՐՈՒՅՑ

ԲԼՈԳԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՑՎԱ՞Ծ Է

Բլոգեր Արթուր Չախոյանը պարբերաբար բացահայտումներ է անում իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզարշավի ժամանակ տեղի ունեցող վարչական ռեսուրսի չարաշահումների եւ մի շարք խախտումների մասին: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Արթուր Չախոյանը պատմում է, թե ինչպես է ՔՊ-ի քարոզարշավի ժամանակ բացահայտել, որ դրան մասնակցում են աշխատակիցներ Զրաշխարհից, Կանաչապատման ՀՈԱԿ-ից, Մշակույթի կենտրոնից եւ այլ կառույցներից: Ինչպես Արթուր Չախոյանն է պնդում, բացահայտումներից հետո աշխատակիցներն իրեն գրում են, որ ստիպողաբար եւ առանց իրենց տեղյակ պահելու են քարոզարշավի տանում:

-Իհարկե, հաճախ չեն արձանագրվում դեպքեր. սա երկրորդ դեպքն է հայտնի Ծիծեռնակաբերդի դեպքերից հետո, երբ ինձ կապում էին ինչ-որ քաղաքական ուժերի հետ, իբրեւ թե նրանց պատվերներն եմ կատարում: Ավելի ուշ պաշտոնապես հայտարարեցի, որ, ասֆալտ ու «բորդյուր» նկարելուց զատ, կնկարեմ նաեւ քաղաքական տեսահոլովակներ, որ մարդիկ հասկանան, որ ես քաղաքականացված չեմ, այլ զուտ սրտացավ եմ Երեւանի խնդիրների նկատմամբ:

Ինչ վերաբերում է Գայի արձանի մոտակայքում տեղի ունեցած միջադեպին հավաքի ժամանակ, ապա կարող եմ ասել, որ տեսանյութը մոնտաժված չէր, եւ շատ հստակ երեւում էր, որ մարդկանց մոտենում եմ, նրանք պատասխանում են, թե որտեղից են եկել, քանի հոգով են եկել, նույնիսկ իրար հերթ չտալով՝ գնալիս ասում էին, որ քիչ թիվ են ասել՝ «25 չէ, այլ 27 հոգով են եղել», որ հետագայում աշխատանքի վայրում որեւէ խնդիր չառաջանա: Հարցը հիմնականում այն է, որ այդտեղ ոչ միայն մանկապարտեզների անձնակազմն էր, այլ, օրինակ, մոտ 100 հոգի եղել են Զրաշխարհից: Հետաքրքիրն այն է, որ անցած տարի Զրաշխարհի հատվածում ես արձանագրել էի, որ ծառահատումներ են տեղի ունեցել, թեժ գիծ էի զանգել, նկարներով ցույց էի տվել, թե ինչ է կատարվում, բայց ընթացք չստացավ, եւ հիմա ամեն ինչ ընկնում է իր տեղը:

-Ձեր ֆեյսբուքյան գրառման մեջ նշել էիք, որ արձանագրել եք մոտ 2500 վարչական ռեսուրսի չարաշահման դեպք, եւ հերթով նշել էիք մանրամասները: Սա գրանցվել է մե՞կ քարոզարշավի ընթացքում, թե՞ պարբերաբար շրջել եք իշխող ուժի հետ եւ արձանագրել խախտումները:

-Ոչ, այդ դեպքը եղել է միայն Գայի արձանի հարակից տարածքում տեղի ունեցող քարոզարշավի ընթացքում. ես մեկ քարոզարշավի ընթացքում հասցրեցի ֆիքսել մոտ 700 հոգի, բայց այնտեղ ավելի շատ էին նման դեպքերը, ու քանի որ ինձ էլ ճանաչում էին, գալիս էին ու աչքունքով հասկացնում էին, որ՝ մի՛ բացահայտեք ամենը, եւ հարցերին էլ չէին պատասխանում, ինչն էլ երեւում է հենց հոլովակում:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԿԱՐԵՎՈՐ

ԿԸՀ-Ն՝ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ Երեւանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզարշավի ժամանակ միջադեպ էր արձանագրվել:

Բլոգեր Արթուր Չախոյանը Երեւանի Նոր Նորքի առաջին զանգվածում քարոզարշավին մասնակցող քաղաքացիներին ներկայանում էր ՔՊ շտաբից՝ հետաքրքրվելով, թե քանի հոգով որ կառույցից են ներկայացել հավաքին:

Պարզվեց՝ մեծամասնությունը «բերովի» մարդիկ էին՝ տարբեր հաստատությունների, համայնքային այլ կառույցների աշխատակազմերի ուղղորդմամբ:

Երեկ «Ժողովուրդ» օրաթերթը ԿԸՀ-ից հետաքրքրվեց, թե այս դեպքի առթիվ ինչ է արվել: Ի պատասխան՝ մեզ հայտնեցին, որ գրություն է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազություն: Սպասենք հետագա զարգացումներին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆ Է

Ադրբեջանը համաձայնություն է տվել Լաչինի միջանցքի եւ Աղդամ-Ստեփանակերտ ճանապարհի միաժամանակյա օգտագործմանը ԿԽՄԿ միջնորդությամբ: Այս մասին հայտարարել է Ադրբեջանի ԱԳՆ խոսնակ Այխան Հաջիզադեն:

«Մենք եւս մեկ անգամ հայտարարում ենք, որ ադրբեջանական կողմը պատրաստ է, Աղդամ-Խանքենդի (Ստեփանակերտ) ճանապարհին զուգահեռ, ԿԽՄԿ-ի միջնորդությամբ ապրանքների փոխադրման համար պայմաններ ստեղծել Լաչինի սահմանային անցակետով սահմանային եւ մաքսային ընթացակարգերի պահպանմամբ»,- ասել է Հաջիզադեն:

Նշենք, որ այս հանգամանքը բողոքի մեծ ալիք է բարձրացրել Ադրբեջանում, որին ի պատասխան՝ Ադրբեջանի ԱԳՆ խոսնակ Այխան Հաջիզադեն հայտարարությամբ է հանդես եկել. «Կրկնում ենք, որ ադրբեջանական կողմը պատրաստ է պայմաններ ստեղծել բեռնափոխադրումների համար՝ պահպանելով սահմանային եւ մաքսային ընթացակարգերը՝ Աղդամ-Խանքանդի ավտոճանապարհին զուգահեռ: Ցավոք սրտի, այն կողմը, որը խոչընդոտում է այս համաձայնագրի իրագործմանը, Հայաստանի ստեղծած դեֆոլտն է Ղարաբաղի տարածաշրջանում»:

Հիշեցնենք, որ ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ սեպտեմբերի 12-ի առավոտյան ռուսական բեռնատարը Աղդամ-Ասկերան ճանապարհով հասել է Ստեփանակերտ:

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Սեպտեմբերի 17-ին կայանալիք Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավը շարունակվում է: Ընտրություններին հաշված օրեր են մնացել, եւ «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, թե ինչպես է տեղի ունենալու քաղաքապետի ընտրությունը, քանի որ սեպտեմբերի 17-ին քաղաքացիները ընտրելու են ավագանի, ոչ թե քաղաքապետ: Այսպիսով, Ընտրական օրենսգրքի 2021թ.-ի փոփոխություններով՝ քաղաքապետ կարող է դառնալ Երեւանի ավագանիում ձայների մեծամասնությունը ստացած ավագանու առաջին համարը: Մեկ այլ կարգավորմամբ՝ քաղաքապետ է ընտրում հենց ավագանին՝ կախված ձայների հարաբերակցությունից: Եթե համայնքի ավագանու ընտրության արդյունքով ընտրությանը մասնակցող կուսակցություններից կամ կուսակցությունների դաշինքից մեկը ստանում է տեղերի 50 տոկոսից ավելին, ապա այդ կուսակցության կամ դաշինքի թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող անձն օրենքի ուժով համարվում է ընտրված համայնքի ղեկավար: Այն դեպքում, երբ ընտրական ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող անձը հրաժարվում է, կամ ավագանու ընտրությունների արդյունքով որեւէ կուսակցություն կամ դաշինք չի ստանում ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին, ապա համայնքի ղեկավարն ընտրվում է բաց քվեարկության միջոցով: Եթե առաջադրվել է մեկ թեկնածու, ապա նա ընտրվում է համայնքի ղեկավար, եթե նրա օգտին կողմ քվեարկած ձայներն ավելի են դեմ քվեարկած ձայների թվից եւ ավելի են ավագանու անդամների ընդհանուր թվի 40 տոկոսից: Եթե առաջադրվել է մեկից ավելի թեկնածու, ապա համայնքի ղեկավար է ընտրվում այն թեկնածուն, որը ստանում է ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը, հակառակ դեպքում առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուների միջեւ անցկացվում է քվեարկության երկրորդ փուլ: Եթե հավասար ձայների պատճառով հնարավոր չէ ունենալ առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուներին, ապա երկրորդ փուլին մասնակցում են նաեւ հավասար ձայներ ստացած մյուս թեկնածուները: Երկրորդ փուլում համայնքի ղեկավար է ընտրվում առավելագույն ձայներ ստացած թեկնածուն: Ձայների հավասարության դեպքում անցկացվում է լրացուցիչ քվեարկություն՝ քվեաթերթիկում ընդգրկելով միայն հավասար ձայներ ստացած անձանց: Լրացուցիչ քվեարկության արդյունքով ձայների հավասարության դեպքում առավելությունը տրվում է տարիքով ավագին: Ընդ որում՝ քվեարկության երկրորդ փուլն ու լրացուցիչ քվեարկությունն անցկացվում են անմիջապես հիմնական քվեարկության արդյունքները հրապարակելուց հետո:

ԲԵՌՆԵՐԸ ԸՆԴՈՒՆԵՑԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացրել էր՝ ռուսական Կարմիր խաչի ուղարկած բեռներն Ակնայի ճանապարհով մտել են Արցախ: Այս իրավիճակի մասին «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Արցախի նախագահի խորհրդական Դավիթ Բաբայանի հետ:

«Իրավիճակը նորմալ է, մենք ունենք մեր սկզբունքային մոտեցումը, որ ադրբեջանական որեւէ բեռ չենք ընդունելու, որովհետեւ դա կլինի նվաստացուցիչ: Ռուսական բեռների դեպքում այլ է, սա ռուսական մեքենաներ են, ոչ ադրբեջանցի վարորդներ են, ռուսական ապրանք է այն, ինչի կարիքը Արցախն ունի: Սա չպետք է գնահատենք մեր սկզբունքներից հետնահան. մեր սկզբունքները միանշանակ են», - նշեց նա:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Երեքշաբթի օրը Ազգային ժողովում կայացած նիստում խորհրդարանը վավերացրել է 2019 թվականի ապրիլին Հայաստանի եւ Չեխիայի կառավարությունների միջեւ ստորագրված ռազմատեխնիկական համագործակցության մասին համաձայնագիրը:

Փաստաթուղթը ներկայացնելով՝ պաշտպանության փոխնախարար Արման Սարգսյանը նշեց, որ փաստաթուղթը սահմանում է ռազմատեխնիկական համագործակցության ոլորտները, այդ թվում՝ ռազմական արտադրանքի արտադրության, ներմուծման, լիցենզավորման եւ որակի վերահսկման մասնագետների պատրաստման գործընթացը:

Համաձայնագիրը նախատեսում է նաեւ օգնություն ռազմական արդյունաբերության ոլորտում մասնագիտացած ընկերություններին եւ տեղեկատվության փոխանակմանը:

Հավելենք, որ ռազմատեխնիկական համագործակցության հայ-չեխական համաձայնագրին կողմ է քվեարկել նաեւ խորհրդարանական ընդդիմությունը:

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

Հակահարձակման ընթացքում Կիեւն արդեն կորցրել է 71 հազար մարդ եւ շատ տեխնիկա, սակայն արդյունքի չի հասել:

«Այնպիսի զգացողություն է, որ «իրենց ժողովուրդը չէ, երբ նրանց նետում են մարտի»», - նշել է Պուտինը:

Նախագահի խոսքով՝ Ռուսաստանը չի կարող դադարեցնել ռազմական գործողությունները, մինչ Ուկրաինան հակահարձակում է իրականացնում:

«Արեւմտյան զենքի եւ հրթիռների, այդ թվում՝ սպառված ուրանի, զինամթերքի մատակարարումը միայն կերկարաձգի հակամարտությունը»-, վստահեցրել է Պուտինը:

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻՆ

ԱԺ նախկին ՔՊ պատգամավոր, ՊՎԾ նախկին ղեկավար Տիգրան Ուլիխանյանին մեղադրանք է առաջադրվել:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Տիգրան Արմենի Ուլիխանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, օրենքով սահմանված կարգով զրկված լինելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, վարել է տրանսպորտային միջոց:

Վերջինիս գործով նախաքննական մարմինը նախաքննության ավարտ է հայտարարել եւ գործը ուղարկել է դատարան: Նրան մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի առաջին մասի հատկանիշներով (Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված անձի կողմից տրանսպորտային միջոց վարելը պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տեւողությամբ, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով):

Ինչ կսպասվի դատարանում ՔՊ-ական նախկին պատգամավորին, կիմանանք՝ հետեւելով զարգացումներին:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ո՞ՐՆ ԷՐ ՊՈՒՏԻՆԻ ՏՈՂԱՏԱԿԸ

«Ժողովուրդ» օրաթերթը փոխանցում է, որ ՀՀԿ փոխնախագահ Արտակ Զաքարյանը գրել է, որ դեռեւս ուշ չէ, եւ հայտնի ճշմարտություն է այն, որ իրական քաղաքականությունը տողատակերում է. «ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի այսօրվա հայտարարության տողատակերից անձամբ ես հասկանում եմ հետեւյալը. եթե դաշտոնական Երեւանը ինչ-որ կերդ հետ վերցնի կամ գոնե խմբագրի 2022թ. հոկտեմբերի 6-ին Պրահայում Նիկոլի կողմից Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը (ներառյալ Արցախը) ճանաչելու հայտարարությունը, ապա Ռուսաստանը դատրաստ կլինի կրկին վերադառնալ Արցախի կարգավիճակի հարցին:

Ես կարծում եմ նաեւ, որ Ադրբեջանի հայատյաց քաղաքականության արդյունքում ստեղծված հումանիտար ճգնաժամը պատճառ կհանդիսանա, որ ԱՄՆ եւ ԵՄ մի շարք երկրներ եւս վերադառնան Արցախի կարգավիճակը փակված չլինելու հարցին, եթե Նիկոլը հրապարակային բացատրի, որ իրեն ճիշտ չեն հասկացել, կամ որ դա Հայաստանի կողմից չվավերացված եւ միայն կառավարության ղեկավարի բանավոր հայտարարություն էր:

Ընդ որում՝ հղում անելով Արցախում ստեղծված հումանիտար աղետի ցեղասպանական հետեւանքների վրա՝ Նիկոլը կարող է ինքը փոխել իր հայտարարությունը եւ այն անել այլ կերպ (Վարդան Օսկանյանը ձեւակերպել է, թե ինչպես), ընդ որում՝ դա բացատրելով այն հանգամանքով, որ ակնհայտ են դարձել, որ Ադրբեջանը չի ցանկանում ապահովել Արցախի ժողովրդի անվտանգությունն ու իրավունքները եւ պատրաստ չէ միջազգային երաշխիքներով Ստեփանակերտ-Բաքու երկխոսությանը:

Այս թեզի հակառակորդները կասեն, որ դա հղի է պատերազմի վտանգով: Պատասխանը պարզ է. իսկ, ի՞նչ է, այսօր չկա՞ պատերազմի վտանգ: Վտանգը լինելու է այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանը չի դարձել ինքնուրույն գործոն եւ հստակ չի կանգնել իր շահերի պաշտպանության գծի վրա: Այսօր գերտերություններին պետք են վստահելի գործընկերներ, ոչ թե խամաճիկային, սեփական անվտանգության հաշվին այս ու այն կողմ թռնող, աշխարհի ժամանակավոր դժվարություններից օգտվող եւ փող աշխատող անկայուն կերպարներ:

ՀայաՔվեի նախաձեռնությանն օրենսդրական ուժ տալը կարող է փրկություն լինել ոչ միայն Հայաստանի ու Արցախի, այլ նաեւ Նիկոլի համար»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԱՀԱՊԱՏԻԺՆ ԱՐԳԵԼՎԵՑ

Ազգային ժողովը վավերացրեց «Բոլոր դեպքերում մահապատժի վերացման մասին» թիվ 13 արձանագրությունը:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ըստ էության, արձանագրությունն ամրագրում է, որ մահապատիժը վերացվում է, եւ ոչ ոք չի կարող դատապարտվել եւ ենթարկվել մահապատժի, իսկ արձանագրության դրույթների որեւէ վերապահում կոնվենցիայի 57-րդ հոդվածի մասով թույլատրելի չէ:

Արձանագրության վավերացումը համահունչ է Հայաստանի՝ որպես մահապատիժը ամբողջական վերացման կողմնակից պետության քաղաքականությանը: Ավելին՝ մահապատիժն արդեն արգելված է Հայաստանի Սահմանադրությամբ:

ՇՔԵՂ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները շարունակում են պետբյուջեի հաշվին իրենց գործուղումները: Այս անգամ հերթը պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանինն է:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նա սեպտեմբերի 20-23-ը կմեկնի Ռեյկյավիկ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) Միգրացիայի, փախստականների եւ տեղահանված անձանց հարցերի հանձնաժողովի նիստի աշխատանքներին մասնակցելու համար:

Պատգամավորի գործուղման հետ կապված ծախսերը՝ ճանապարհածախսը, օրապահիկը, ինչպես նաեւ գիշերավարձը կկատարվի պետբյուջեի հաշվին:

ԱՋԱՏՎԵՑ ՊԱՇՏՈՆԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նոր հրամանագիր է ստորագրել, ըստ որի՝ ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Ծովինար Սողոմոնյանին 2023 թվականի սեպտեմբերի 15-ից ազատել են Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալի պաշտոնից:

ԲԵՌՆԵՐԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթին ԱՀ սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարությունից տեղեկացնում են, որ սեպտեմբերի 12-ին Ասկերան քաղաքով Արցախ է մուտք գործել ռուսական Կարմիր խաչի մեկ բեռնատար մեքենա՝ բեռնավորված ռուսական արտադրության հումանիտար բեռներով:

Նախարարությունից ներկայացրին այն ապրանքատեսակների ցանկը, որը մուտք է գործել Արցախի Հանրապետություն: Մասնավորապես, բեռներում եղել են՝

Մթերքներ - 1000 հավաքածու
Մեկ հավաքածուի մեջ մտնում են՝
Արեւածաղկի ձեթ
Շաքարավազ
Ալյուր
Մակարոնեղեն
Ձավարեղեն
Տուշոնկա
Մեկ հավաքածուի քաշը՝ 11 կգ

2. Անկողնային պարագաներ՝ 270 հավաքածու
Մեկ հավաքածուի մեջ մտնում են՝
Սպիտակեղենի հավաքածու,
Բարձ,
Ծածկոց

3. Հիգիենայի պարագաների հավաքածու
Մեկ հավաքածուի մեջ ներառված են՝
Ատամի խոզանակներ,
Օճառներ,
Ջերմաչափ

4. Մանկական հավաքածուներ
Մեկ հավաքածուի մեջ ներառված են՝
Կիսել,
Վիտամիններ,
Ատամի խոզանակներ,
Պյուրե

«Հումանիտար օգնությունը տրամադրվելու է մեր բնակչությանը, որի վերաբերյալ հավելյալ կտեղեկացնենք»,- տեղեկացնում են Արցախի Հանրապետության սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարությունից:

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ՇԵՆՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՎԵՑ ՀՀ-ԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Գլխավոր դատախազությունը պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում 2022 թվականի նոյեմբերի 18-ին Հայաստանի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցանկում ընդգրկված Աբովյան 3 հասցեի շենքը (հանրության շրջանում հայտնի «ԱՕԿՍ»-ի շենքը) Հայաստանի Հանրապետությանը վերադարձնելու նպատակով հայց էր հարուցել Վարչական դատարան:



Նշենք, որ հայց հարուցելու հիմքում դրվել էր այն հանգամանքը, որ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության մինիստրների սովետի 1955 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 699 կարգադրությամբ՝ Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի կոմիտեի՝ «ԱՕԿՍ»-ի հաշվեկշռին հանձնվել էր գույք, այդ թվում՝ Աբովյան 3 հասցեի շենքը:

Հետագայում՝ 1992 թվականի հուլիսի 30-ին, ստեղծվել է «Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի եւ համագործակցության հայկական ընկերություն» կազմակերպությունը, որը, առանց օրինական հիմքերի, հանդես է եկել որպես Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի կոմիտեի իրավահաջորդ եւ 2001 թվականին, ներկայացնելով իր ստեղծումից շուրջ 37 տարի առաջ ընդունված վերոհիշյալ կարգադրությունը, ստացել է «ԱՕԿՍ»-ի շենքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայական:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ Գլխավոր դատախազությունը Վարչական դատարան ներկայացված հայցով պահանջում էր անվավեր ճանաչել Կադաստրի կոմիտեում Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի եւ համագործակցության հայկական ընկերության 2001 թվականի հուլիսի 3-ին եւ «ԱՕԿՍ» ՍՊ ընկերության անվամբ 2011 թվականի նոյեմբերի 25-ին կատարված իրավունքի պետական գրանցումները:

Հավելենք, որ հայցադիմումը Վարչական դատարան էր մուտքագրվել 2022 թվականի նոյեմբերի 22-ին:

2023 թվականի սեպտեմբերի 8-ին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության եւ «ԱՕԿՍ»-ի շենքի սեփականատերերի միջեւ կնքվել է հաշտության համաձայնություն: Համաձայնությունը նույն օրը մուտք է արվել Վարչական դատարան:

Դատարանի կողմից հաշտության համաձայնությունը հաստատվելուց հետո Աբովյան 3 հասցեում գտնվող 526.9 քմ շենքի եւ 0,0467 հա մակերեսով հողամասի սեփականության իրավունքը կփոխանցվի Հայաստանի Հանրապետությանը:

Հիշեցնենք, որ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանի ապօրինի մասնավորեցման վերաբերյալ քննվող քրեական վարույթով նախաքննությունը Ազգային անվտանգության ծառայության քննչական գլխավոր վարչությունում շարունակվում է:

ՀԱՅՏՆԱԲԵՐԵՑԻՆ

ՉՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՎԱԾ ՁՈՒԼԱԿՏՈՐՆԵՐ

Գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունում ուսումնասիրվել է Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանի Հանրապետություն ոսկյա ձուլակտորներ ներմուծելու վերաբերյալ չորս վարույթ:

«Ժողովուրդ» օրաթերթը գլխավոր դատախազության տարածած հաղորդագրությունից տեղեկանում է, որ 2022 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին «Զվարթնոց» օդանավակայանում զննման են ենթարկվել Ռուսաստանի Դաշնությունից Հայաստան ժամանած քաղաքացիների ուղեբեռները:

Զննման արդյունքում հայտնաբերվել են Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող՝ ակնհայտ առեւտրային չափաքանակի, գործարանային արտադրության ոսկյա ձուլակտորներ, որոնց չափը գերազանցել է Կառավարության որոշմամբ հաստատված ոչ առեւտրային չափաքանակը՝ 10 կիլոգրամը. կազմվել են մաքսանենգության դեպքերի վերաբերյալ արձանագրություններ:

2022 թվականի հոկտեմբերի 27-ին 7 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 292-րդ հոդվածի 1-ին մասով (մշակութային արժեքների եւ ռազմավարական տեսակետից կարեւոր հումքային ապրանքների մաքսանենգություն, որը կատարվել է սահմանված կարգով չհայտարարագրելու միջոցով):

2023 թվականի մայիսի 29-ին մեղադրյալների նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է՝ Քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (ռեաբիլիտացնող) հիմքով, այն է՝ քրեական հետապնդում չպետք է հարուցվի, իսկ հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե անձը չի կատարել իրեն մեղսագրվող արարքը (ԵԱՏՄ շրջանակներում մաքսային հսկողության եւ մաքսային հայտարարագրման գործընթաց առհասարակ նախատեսված չէ):

Նշենք, որ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազների կողմից կիրառվել են դատախազական ներգործության միջոցներ, որոնց արդյունքում 7 անձանց մեղադրանքը փոփոխվել է, նրանց արարքը որակվել է Քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածով (հարկերը, տուրքերը կամ այլ վճարներ չվճարելը):

Արդյունքում վերականգնվել է պետությանը պատճառված 151 մլն 713 հազար 273 դրամի վնասը, իսկ վերոնշյալ անձանց նկատմամբ, Քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա (եթե անձն ամբողջությամբ վճարել է չվճարված հարկերը, տուրքերը կամ այլ վճարները եւ դրանց չվճարման համար հաշվարկված տույժերը, ազատվում է քրեական պատասխանատվությունից), կայացվել են քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշումներ, այդ թվում՝ ոչ ռեաբիլիտացիոն հիմքով:

ՈՒՇԱԳՐԱՎ

ԿԱՆ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ սեպտեմբերի 11-ին Հայաստան-Խորվաթիա ֆուտբոլային հանդիպման ժամանակ ֆիզիկական ներգործություն կատարելու կասկածանքով ձերբակալվել են Խորվաթիայի երկու քաղաքացիներ եւ մեկ ՀՀ քաղաքացի:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ նրանք բացատրություն են տվել, թե ինչի համար են վիճել, ու բաց են թողնվել:

Հիշեցնենք, որ երեկ ֆուտբոլային խաղի ժամանակ ծեծկռտուք էր տեղի ունեցել հայ եւ խորվաթ երկրպագուների միջեւ, իսկ խաղն ավարտվել է Հայաստանի հավաքականի պարտությամբ:

ՀԱՇՎԱՊԱՀԻ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Արմեն Խանամիրյանին մեղադրանք է առաջադրվել:

Նա, 2011 թվականի սեպտեմբերի 1-ից մինչեւ 2018 թվականի սեպտեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում հանդիսանալով «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերության գլխավոր հաշվապահ եւ օգտվելով «Հաշվապահական հաշվառման մասին Հայաստանի Հանրապետության» օրենքի 9-րդ հոդվածով գլխավոր հաշվապահին վերապահված լիազորություններից, 2017 թվականի փետրվարի 15-ից մինչեւ 2018 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում միջոցներ տրամադրելու՝ կեղծ կատարողական ակտերն օգտագործելու եւ իրացնելու եղանակով օժանդակել է «Սեքյուրիթի Դրիմ» եւ «Աէլլիպս Ջիէյ» ՍՊ ընկերությունների համահիմնադիրներ Ալեքսան եւ Գուրգեն Զաքարյաններին:

Նաեւ «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊ ընկերության տնօրեն Կարեն Կարապետյանի կողմից նախնական համաձայնությամբ խարդախությամբ ուրիշի առանձնապես խոշոր չափերի գույքը հափշտակելու մեկ միասնական դիտավորությանը, եւ Ս. Սահակյանի ու Ա. Զաքարյանի կողմից նախնական համաձայնությամբ կազմված՝ ծառայությունների մատուցման վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող, իրավունք վերապահող պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող կեղծ կատարողական ակտերը ստանալով եւ տեղյակ լինելով դրանց կեղծ լինելու հանգամանքի մասին, նշված կատարողական ակտերը տնօրեն Կ. Կարապետյանի հետ օգտագործել, եւ դրանց հիման վրա կազմել են հանձնման-ընդունման արձանագրություններ:

Դրանց հիման վրա՝ Ա. Խանամիրյանը կազմել է հարկային հաշիվներ եւ դրանք իրենց ամբողջության մեջ իրացրել, ներկայացրել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության ֆինանսական բաժանմունք՝ խաբեության եղանակով Հայաստանի Հանրապետությունից հափշտակելով առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 770.960.963 ՀՀ դրամ գումար:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 11-ից 12-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 46 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՎԱՏԹԱՐ ՎԻՃԱԿ՝ ԴՊՐՈՑՈՒՄ

Հաղարծնի դպրոցի պատմության ուսուցչուհի Լիաննա Ղազինյանն ուսումնական տարին սկսվելուց առաջ դիմել է դպրոցի տնօրեն Գոհար Թամամյանին, թե ինչու իրեն դասղեկություն չի տալիս:

Լ. Ղազինյանը գրավոր դիմել է նաեւ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին, սակայն հարցը չի լուծվել: Գոհար Թամամյանի հարազատ քույրը՝ 1960 թ.-ին ծնված Գայանե Թամամյանը՝ Հանրային հեռուստաընկերության Տավուշի մարզում լրագրողը 2015թ,-ից Հաղարծինի միջնակարգ դպրոցում զբաղեցնում է ԴԱԿ (դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ) պաշտոնը:Մարզպետ Հ. Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք արել, թե ինչո՞ւ դպրոցի տնօրեն Գոհար Թամամյանը Ղազինյանին դասղեկություն չի տալիս:

Մարզպետը պատասխանել է.«Ուսուցչուհուն դասղեկություն տալու հարցը որոշում է դպրոցի տնօրենը»: Հաղարծնի դպրոցից հայտնում են, որ Գայանե Թամամյանը Հաղարծնի դպրոց աշխատանքի է գնում իր ցանկացած ժամանակ, կեսօրին մոտ, երբ ցանկանում, գործից տուն է գնում:

Մարզպետ Հ. Ղալումյանը, պատասխանելով իմ հարցմանը, Գայանե Թամամյանի երկրորդ աշխատանքի մասին նշել է. «Քանի որ լրագրողի աշխատանքը ամրագրված աշխատանքային գրաֆիկ չունի, հետեւաբար այդ հանգամանքը չի կարող խանգարել 0,5 դրույքաչափով իր աշխատանքային պարտականությունները լիարժեք կատարելուն»: Մեծ թվով աշակետներ ունեցող Հաղարծնի դպրոցի տնօրեն, 62-ամյա Գոհար Թամամյանը իր պարտականությունները կատարելուն զուգահեռ, նաեւ դասղեկություն է անում: Ղազինյանը հայտնեց, որ 2018թ.-ին Տավուշի մարզպետարան իր բողոքի հետքերով Հաղարծնի դպրոց են ժամանել այն ժամանակ փոխմարզպետ Տիգրան Թամրազյանը եւ մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության մասնագետ Հասմիկ Խաչատրյանը եւ երբ Լիաննան մարզպետարանի պաշտոնյաների ներկայությամբ Գ. Թամամյանին ասել է, որ թե նա ինչո՞ւ է դասղեկություն անում, սակայն դասղեկությունը ձեւակերպում այլ ուսուցչի անունով, վերջինս աշխատավարձը ստանալով՝ հանձնել է իրեն, Գ. Թամամյանն արդարացել է, թե իբր դասղեկի հարմար թեկնածու չկար: Լ. Ղազինյանի վկայությամբ՝ Գ. Թամամյանը որպեսզի արդարացնի իրեմ դասղեկություն չտալը, միջնորդավորված ձեւով, Դիլիջանի համայնքապետարանի նախկին աշխատակցուհու, այժմ կադաստրի կոմիտեի Դիլիջանի գրասենյակի պետի՝ Հաղարծնի դպրոցի աշխարհագրության ուսուցչուհու աղջկա միջոցով կազմակերպել է դասարանի աշակերտների ծնողների ստորագրահավաք, իբր ծնողները դեմ են, որ Լ. Ղազինյանը դասղեկություն անի:

Լ. Ղազինյանը հանդիպել է այդ ծնողների հետ, ծնողներից ոմանք հայտնել են, որ իրենց ստորագրել են տվել սպիտակ թղթի տակ, ոմանք հայտնել են՝ իրենք չեն իմացել, թե ինչի տակ են ստորագրում, ոմանք էլ Լիաննային ասել են ՝ քեզ չենք ճանաչում, ո՞նց կարող ենք դժգոհ լինել քո աշխատանքից:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿՐԹԱԿԱՆ

ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգում կատարվել են փոփոխություններ. ըստ այդմ՝ լրամշակվել է ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 30-ի N 954-Ն որոշումը:

ԿԳՄՍՆ-ից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ սահմանվել է, որ մինչեւ հանրակրթության նոր պետական չափորոշչի ամբողջական ներդրումը՝ 2026 թվականի սեպտեմբերի 1-ը, հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում կրթական 1-ին եւ 2-րդ աստիճաններում (տարրական եւ հիմնական) յուրաքանչյուր դասարանում սովորողների առավելագույն թիվը 35 է, իսկ կրթական 3-րդ աստիճանում (ավագ)՝ 30:

Կարգով սահմանվել են դրույթներ հաստատությունում միեւնույն առարկան ուսումնասիրող բազմահամակազմ դասարանների ձեւավորման վերաբերյալ, որոնք 2023-2024 ուսումնական տարվա սեպտեմբերի 1-ից ուժի մեջ են մտել միայն Սյունիքի մարզում (30-35 կոմպլեկտավորման սկզբունքով):

Հանրապետության մյուս մարզերում գործում է բազմահամակազմ դասարանների ձեւավորման սկզբունքը՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019 թ. հոկտեմբերի 14- ի N 22-Ն հրամանի կարգավորումների (30-35 կոմպլեկտավորման սկզբունքով):

Միաժամանակ նաեւ տրվել է կարգավորում, ըստ որի՝ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների համապատասխան դասարաններում, որտեղ, ըստ սահմանված ժամանակացույցի, ներդրվում է հանրակրթության պետական չափորոշիչը, բազմահամակազմ դասարաններ չեն ձեւավորվի: Հետեւաբար, 2023-2024 ուսումնական տարում ՀՀ բոլոր դպրոցների (բացառությամբ Սյունիքի մարզի, որտեղ ներդրվում է նոր մեխանիզմը, եւ Տավուշի մարզի, որտեղ ամբողջությամբ նոր չափորոշչով է ուսուցումն իրականացվում) 2-րդ, 5-րդ ե 7-րդ դասարանները ձեւավորված բազմահամակազմ դասարաններին չեն միավորվելու:

Միաժամանակ տրվել են կարգավորումներ հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնների, մասնագիտացված ուսումնական հաստատությունների, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների (մանկավարժահոգեբանական 3-րդ եւ 4-րդ աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխաներով համալրված դասարաններում (ուսումնական խմբերում)) առավելագույն թվի վերաբերյալ:

Նշենք նաեւ, որ միջնակարգ դպրոցի 3-րդ աստիճանում սովորողների մասնագիտական նախասիրություններն ու կողմնորոշումը զարգացնելու նպատակով ձեւավորվում են միեւնույն առարկան կամ միեւնույն բնագավառում միեւնույն առարկայական ծրագիրն ուսումնասիրող առանձին խմբեր:

Նշենք, որ նախատեսվում է, որ 2026 թվականի սեպտեմբերի 1-ից հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում կրթական 1-ին եւ 2-րդ աստիճաններում (տարրական եւ հիմնական) յուրաքանչյուր դասարանում սովորողների առավելագույն թիվը լինելու է 25, իսկ կրթական 3-րդ աստիճանում (ավագ)՝ 20:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՃԱՆԱՉԵԼ Է



«Եթե Հայաստանը Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի մաս է ճանաչել, վերջ, էլ ինչի՞ մասին է խոսքը»,- ասել է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը Արեւելյան տնտեսական ֆորումի լիագումար նիստում իր ելույթի ժամանակ: «Սա է ամբողջ խնդրի առանցքային բաղադրիչը: Ղարաբաղի կարգավիճակը հենց Հայաստանն է որոշել. դա է խնդիրը»,- ասել է ՌԴ նախագահը:

Խոսելով Հայաստանի հետ երկկողմ հարաբերությունների վերջին իրադարձությունների մասին, որոնք ոմանք բնութագրում են որպես ճգնաժամ եւ հետընթաց, Պուտինը համաձայն չէ նման մեկնաբանության հետ: «Չեմ կարծում, որ շրջադարձ կա. մենք տեսնում եւ հասկանում ենք, թե ինչ է տեղի ունենում»,- ասել է ՌԴ ղեկավարը:

Միջոցառման վարողի հարցին, թե արդյոք Փաշինյանն այս օրերին զանգահարել է իրեն, Պուտինը հայտնել է, որ ՀՀ վարչապետից նամակ է ստացել:

«Մենք Հայաստանի հետ խնդիրներ չունենք, Փաշինյանի հետ էլ խնդիրներ չկան, մենք անընդհատ կապի մեջ ենք նրա հետ»,- նշել է ՌԴ նախագահը:

ԱՐՏԱՀԱՆՈՒՄ՝ ԻՐԱՆԻՑ

Իրանի հյուսիս-արեւմուտքում գտնվող Արեւելյան Ատրպատական նահանգի մաքսատներով վերջին հինգ ամսում դեպի աշխարհի 90 երկրներ, այդ թվում՝ Հայաստան, 560 միլիոն դոլարի ապրանք է արտահանվել: Այս մասին հայտնել է մաքսային հսկիչ Լեյլի Օրանգին:

Իրանի Ատրպատականի մաքսատներից 560 մլն դոլարի արտահանում է իրականացվել դեպի 90 երկիր, այդ թվում՝ Հայաստան:

Նա հայտարարել է, որ Արեւելյան Ատրպատական նահանգի մաքսատներից արտահանման հիմնական թիրախային երկրներն են Հայաստանը, Թուրքիան, Իրաքը, Բուլղարիան, Վրաստանը, Ադրբեջանը, Աֆղանստանը, Ռուսաստանը, Արաբական Միացյալ Էմիրությունները եւ Պակիստանը:

ՎԱՅՐԷՋՔԻ ՊԱՏՃԱՌԸ

Սոչի-Օմսկ չվերթը խափանվել է: Ինքնաթիռը վայրեջք է կատարել Նովոսիբիրսկի մարզում՝ բաց դաշտում:

Վայրէջքի պահին ինքնաթիռում եղել է 159 ուղեւոր, այդ թվում՝ 23 երեխա:

Հայտնի է դարձել, որ ուղեւորներից մեկի ինքնազգացողությունը վատացել է, ունեցել է զարկերակային գերճնշում: Նրան տեղում բուժօգնություն են ցուցաբերել:

Այժմ քննիչները եւ օդային տրանսպորտի դաշնային գործակալությունը պարզում են միջադեպի պատճառներն ու հանգամանքները:

Ինքնաթիռի օդաչուն վթարի մասին խոսելիս նշել է, որ ինքնաթիռում վառելիքը գրեթե սպառվել էր, ուստի տեղի է ունեցել հիդրավլիկ խափանում:

Անձնակազմը մտավախություն ուներ, որ չվերթը ավելի վատ ավարտ կարող է ունենալ, դրա համար որոշել են վայրեջք կատարել Նովոսիբիրսկում:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 13 ճՏՊ. 1 մարդ զոհվել է, 17-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԻՐԱՋԵԿՈՒՄ

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆ ԻՋԵՑՎԵԼ Է

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ սեպտեմբերի 12-ին տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի նիստ, որի ժամանակ որոշվել է իջեցնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով 9.75 %:

ԿԲ-ից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ որոշվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը սահմանել 11.25 %, իսկ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 8.25 %:

Հավելենք, որ Կենտրոնական բանկն այս տարվա համար բարձրացրել է տնտեսական աճի իր կանխատեսումը՝ հասցնելով 7.2 տոկոսի:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հայտնեց Կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը:

«Մենք շատ փոքր չափով վերանայել ենք տնտեսական աճի ցուցանիշը, նախկինում կանխատեսվող 6.9-ի փոխարեն այժմ կանխատեսում ենք 7.2 տոկոս՝ հիմնականում պայմանավորված ծառայությունների եւ շինարարության ոլորտների բարձր աճով»,-ասաց Գալստյանը:

ԱՆՎՃԱՐ ԴԵՂԵՐ

Ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումներ ունեցող անձանց համար հիմնական դեղերի ցանկում ընդգրկված դեղերը, նախկին 50% զեղչի փոխարեն, կտրվեն անվճար:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում է Առողջապահության նախարարությունը:

Իսկ ովքե՞ր են շահառուները:

Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 642-Ն որոշմամբ սահմանվել է, որ հաշմանդամություն ունեցող անձին տրված տեղեկանքները (վարչական ակտերը) հիմք են սահմանված դեղերը ստանալու համար:

Տվյալ դեպքում, բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի որոշմամբ, անձի «3-րդ խմբի հաշմանդամ անձ» կարգավիճակը հավասարեցվում է անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի որոշմամբ սահմանված «ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ» կարգավիճակին:

Նշենք, որ այս քաղաքացիների համար անվճար դեղերը հասանելի կլինեն առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների (ամբուլատորիա, պոլիկլինիկա) միջոցով:

Հավելենք, որ հիմնական դեղերի անվանցանկը եւս լրամշակվել եւ թարմացվել է անհրաժեշտ նոր դեղերով:

ՆՊԱՍՏՆԵՐ

ՎՃԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԿՀՍՏԱԿԵՑՎԵՆ

Մինչեւ 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի եւ երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման եւ վճարման գործընթացները կհստակեցվեն:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ներկայացվող նախագծի ընդունումը պայմանավորված է «Պետական նպաստների մասին» օրենքի՝ ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի եւ հրատապ օգնության վճարման հարաբերություններին առնչվող կարգավորումները «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցելու, ինչպես նաեւ մինչեւ երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի եւ երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման եւ վճարման գործընթացները հստակեցնելու եւ լավարկելու անհրաժեշտությամբ:

««Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծն առաջին ընթերցմամբ քննարկվել է ԱԺ հերթական նիստի ընթացքում: Այն ներկայացրել է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյանը: Նշենք, որ առաջարկվող փոփոխություններով սահմանվում է նաեւ, որ օտարերկրյա պետությունում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում դիվանագիտական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձի, նրա՝ օտարերկրյա պետությունում գտնվող ամուսնուն, Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող՝ դիվանագիտական ծառայության մարմիններում վարչատեխնիկական կամ սպասարկման անձնակազմում աշխատող անձի երեխայի ծննդյան միանվագ նպաստ կնշանակվի, եթե երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինը: Այս դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար դիմելու, նշանակելու եւ վճարելու առանձնահատկությունները սահմանելու է ՀՀ կառավարությունը: Օրենքից պետք է հանել երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելուց եւ վճարելուց հետո նշանակված նպաստը բռնագանձելու պահանջն այն դեպքում, երբ նոր ծնված երեխայի հերթական կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված երեխան կամ նոր ծնված երեխան նպաստ նշանակելուց հետո հայտնվում են մանկատանը՝ հաշվի առնելով, որ երեխայի ծննդյան միանվագ նպաստը պարբերական բնույթ չունի, տրվում է կոնկրետ ծննդյան կապակցությամբ, եւ իրավունք տվող պայմանները սահմանված են դիմելու օրվա դրությամբ:

Ըստ զեկուցողի՝ ներկայացվող նախագծով կհստակեցվեն երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու եւ խնամքի նպաստի իրավունք տվող պայմանները՝ առանձնահատկություն սահմանելով առանց ծնողական խնամքի մնացած կարգավիճակով երեխայի խնամակալի խնամքի նպաստի իրավունքի համար: Հաջորդիվ կհստակեցվեն նաեւ խնամքի նպաստ նշանակելու պայմանները՝

ա/ ծնողի եւ երեխայի՝ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառված լինելը,

բ/ երեխայի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելը:

Հավելենք նաեւ, որ խորհրդարանը նախորդ նստաշրջանում քննարկել էր ԱԺ «Պատիվ ունեմ» եւ ԱԺ «Հայաստան» խմբակցությունների՝ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամի պաշտոնում Անահիտ Սարգսյանի թեկնածությունն առաջադրելու հարցը: Սեպտեմբերի 12-ին ԱԺ-ն իրականացրել է քվեարկությունը: ԱԺ հաշվիչ հանձնախմբի նախագահ Նարեկ Բաբայանը տեղեկացրել է, որ 107 պատգամավորից քվեարկությանը մասնակցել է 33-ը: Առաջադրված թեկնածուի օգտին կողմ է քվեարկել 33 պատգամավոր: Անահիտ Սարգսյանի թեկնածությունը խորհրդարանը չի հաստատել:

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ»

ԱՐՇԱՎ Է ՄԵԿՆԱՐԿԵԼ

«Կոնվերս բանկ»-ը մեկնարկել է նոր խրախուսման արշավ Visa Premium քարտապանների համար: Մինչեւ հոկտեմբերի 31-ը կատարելով հանրագումարային 500,000 եւ ավելի ՀՀ դրամի կամ համարժեք արտարժույթի անկանխիկ գնումներ Visa Premium քարտերով՝ բանկի հաճախորդները կմասնակցեն խաղարկության, որի մրցանակային ֆոնդը ներառում է.

-ընտանեկան ուղեւորություն Abu Dhabi Ferrari World՝ նախատեսված մինչեւ 4 անձի համար (ամուսիններ եւ 2 երեխա),

-«Զվարթնոց» օդանավակայանի VIP սրահով 5 երկկողմանի թռիչք՝ նախատեսված 2 անձի համար,

-30 կտրոն օդանավակայանի Fast Track-ից օգտվելու համար:

Մրցույթի մասնակիցները յուրաքանչյուր հանրագումարային 500,000 ՀՀ դրամի/ համարժեք արտարժույթի անկանխիկ գործարքի դիմաց կստանան անհատական կոդ: Մրցույթում հաղթողները կորոշվեն «Կոնվերս բանկ»-ի ֆեյսբուքյան էջում ուղիղ եթերի ընթացքում քարտապանին տրամադրված անհատական կոդերից պատահական ընտրության միջոցով:

Բանկում նշել են, որ զուգահեռաբար Visa Premium քարտապանները կօգտվեն Visa վճարահաշվարկային համակարգի հետաքրքիր եւ տարաբնույթ առաջարկներից, ինչպես նաեւ պրեմիում քարտապանների համար բանկի եզակի առաջարկից:

««Կոնվերս բանկ»-ի պրեմիում քարտերը մրցակցային մեծ առավելություն ունեն Հայաստանում: Բանկը միակն է, որի պրեմիում քարտապան հաճախորդները, վճարելով ընդամենը 100 դրամ մուտքի վճար, մինչեւ 14 տարեկան երկու երեխայի հետ կարող են անսահմանափակ օգտվել «Զվարթնոց» օդանավակայանի Business Lounge-ից»,-ասել են Բանկում:

Մանրամասները՝ conversebank.am, 010-511-211:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

5 iPhone 15՝ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ

Կապի նոր չափորոշիչներ, USB Type-C, ականջակալ, 48 Mp գլխավոր տեսախցիկ, եւս մեկ գերընդգրկուն ու ամենաբարձր որակի տեսախցիկ, էներգիայի խնայողության չիպ... Սա միայն մի մասն է այն հնարավորությունների եւ տեխնիկական բնութագրերի, որ, համաձայն հրապարակումների, ունենալու է iPhone 15-ը:

Նոր սերնդի ամենասպասված սմարթֆոնը Apple ընկերությունը ներկայացրեց երեկ՝ իր աշնանային շնորհանդեսի ընթացքում, իսկ վաճառքը կմեկնարկի շնորհանդեսից մոտ երկու շաբաթ անց:

Մինչ միլիոնավոր մարդիկ ողջ աշխարհում սպասում են iPhone 15-ի վաճառքի մեկնարկին, «Կոնվերս բանկ»-ը ACT2WIN արշավի արդյունքում խաղարկությամբ ստանալու հնարավորություն է ընձեռում իր հաճախորդներին:

Մասնավորապես, արշավին մասնակցելու համար ընդամենը հարկավոր է.

- լինել Converse mobile օգտատեր,
- մինչեւ 2023 թվականի հոկտեմբերի 15-ը ներառյալ հավելվածով կատարել վարկի առնվազն մեկ մարում:

Վարկի մարում կատարած անձանց կուղարկվի անհատական կոդ. հաղթողները կորոշվեն բանկի ֆեյսբուքյան էջում կայանալիք ուղիղ եթերի ընթացքում:

Արշավին կարող են մասնակցել նաեւ ներկայում բանկի Converse Mobile օգտատեր չհանդիսացող անձինք՝ ներբեռնելով հավելվածը, ակտիվացնելով այն եւ օգտվելով «Վարկի մարում» գործառույթից:

Մանրամասն՝ conversebank.am, 010-511-211:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՇՈՈՒ ԲԻԶՆԵՍ

ՌԱՖԱՅԵԼՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Ռաֆայել Երանոսյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում խոսել է մայրիկի մահից հետո չկոտրվելու, բարեգործությունների, սպասվելիք ամուսնության, ստեղծագործական կյանքի բուռն շրջանի միայն:

-Եթե անկեղծ, երկար ժամանակ մտածում էի, թե Քեզ ինչպես ճիշտ ներկայացնեմ, որովհետեւ Դուք սովորաբար ասում եք, որ դերասան եք եւ զբաղվում եք դերասանությամբ, իսկ այն, ինչ անում եք, «կողքից գործեր» են՝ ապրելու եւ գոյատեւելու միջոցներ: Ծնվելուց հետո՝ առաջին ամսին, կոչվել եք Սեւակ, անձնագրով՝ Ռաֆիկ, հանրային տիրույթում՝ Ռաֆայել Երանոսյան, ընկերների շրջանում՝ Ռաֆո: Ի վերջո, ո՞վ է հենց հիմա իմ զրուցակիցը:

-Նայե՛ք, վերջերս հորս հետ էի զրուցում այդ թեմայով. պարզվում է, որ չնայած ես ի սկզբանե իմացել եմ, որ իմ անունը Սեւակ են դրել, դա այդքան էլ այդպես չէ: Գնացել էինք հանգստանալու հայրիկիս հետ, հարցրի, թե ինչու են հենց Սեւակ անունը նախընտրել, ասաց. «Տղա ջան, ոչ թե Սեւակ, այլ Սիմոն»: Փաստորեն, ի սկզբանե Սիմոն է եղել, հետո ծննդական են հանել, դրել Սեւակ 1-2 օրվա ընթացքում, հետո պատռել են ծննդականը, ես էլ մոտ վեց ամիս առանց ծննդականի ու անունի եմ մնացել, ի վերջո, Ռաֆիկ եմ դարձել:

Այս 42 տարիներիս ընթացքում ինչ կերպար որ մարմնավորել եմ թե՛ թատրոնում, թե՛ հեռուստաթերում, տարբեր անուններ են ունեցել, ու մինչեւ այսօր ինձ ամեն մեկը մի անունով հիշում է՝ ընկեր Կարո, Բաբալ, Ջուլալ եւ այլն: Շատ անուններ են տվել, ու այդ կերպարները իմ կյանքն են դարձել, ես իրենց հետ ինչ-որ էտապ եմ ապրել, իմ երեխայի պես սիրել եմ իրենց եւ հրամցրել եմ հանդիսատեսիս: Ահա սրա համար էլ ինձ հոգեհարազատ է ամեն մի անունը, ամեն մի կերպարը, չնայած վերջերս ամեն բան փոխվել է. մարդիկ երբ տեսնում են ինձ փողոցում, նկատել եմ, որ սկսել են դիմել «պարոն Երանոսյան»-ով. երեւի արդեն մեծ մարդ եմ՝ դրանից է:

-Եկեք հետ գնանք այն ժամանակաշրջանը, երբ տարիներ առաջ արմավիրցի Ռաֆիկը եկավ Երեւան հստակ նպատակով՝ դառնալու դերասան: Իհարկե, մենք երբ ունենում ենք հստակ նպատակ, շատ հաճախ անհողդողդ գնում ենք դեպի այդ նպատակը՝ չշեղվելով, բայց կան ընկալումներ կենցաղային, որոնք շատ հաճախ ազդում են մեր նպատակասլացության վրա: Շատերս ենք հասկանում, թե Արմավիրը (ավելի հասկանալի ասված՝ Հոկտեմբերյանը) ինչի հետ է ասոցացվում, հոկտեմբերյանցի տղան՝ առավել եւս: Այդ կաղապարների մեջ արդյոք դժվար չէ՞ր գալ ու դառնալ դերասան Երեւանում:

-Երբ որ այստեղ կամ հյուրախաղերով Հայաստանից դուրս եմ գալիս, ու գալիս են, կես կատակ-կես լուրջ ուզում են ինչ-որ բաներ, որոնք իմ հետ որեւէ առնչություն չունեն, ես պաշտոնապես ասում եմ, որ ես ընդհանրապես այդ գործում չեմ եղել ու չկամ. դա կփաստեն նաեւ ինձ ճանաչողները: Միանշանակ դժվար էր սկիզբը, երբ որ ես պետք է գայի քաղաք. ես ունեի հստակ նպատակ՝ ուզում էի դառնալ դերասան...

Զրույցն ամբողջությամբ՝ ArmLur.am կայքում

Զրուցեց ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԸ

ԱՇԽԱՐՀ

ԱՐՑԱԽԻ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Քարդաշյանների հայտնի դիմահարդար Հրուշ Աճեմյանը Գեղարդի վանքում արված լուսանկարների շարք է հրապարակել: Ամերիկահայ հայտնի ոճաբանն իր աղոթքներում հիշատակել է Արցախի մասին:

«Մեր հայկական սրտերում մենք կրում ենք գոյատեւածների ժառանգությունը՝ ճկունության, ուժի եւ անսասան ջանքերի վկայությունը: Մենք բարձրացնում ենք մեր ձայնը, որպեսզի ոչ թե անդրադառնանք անցյալի վշտին, այլ լույս սփռենք ներկա սարսափի վրա, որը չպետք է կուլ տանք: Ադրբեջանի կողմից շրջափակումը դաժան եւ անսիրտ արարք է, որը կտրել է կյանքի ճանապարհն Արցախից՝ մեր սուրբ հողից, որտեղ քրիստոնյա հայերը կանգնած են ձեռք ձեռքի: Տարիներ շարունակ մենք ապավինում էինք Լաչինի միջանցքին օգնության, ապրուստի եւ բժշկության համար, բայց հիմա նրանք դա օգտագործում են իրենց խաղում: Ադրբեջանի կողմից սովի մարտավարությունը ամոթալի է»,-հրապարակման մեջ գրել է Հրուշը՝ անդրադառնալով նաեւ 2020 թ-ի արցախյան 44-օրյա պատերազմին: Նա հավելել է, որ վիշտը դեռ մեր սրտերում է:

«Հրադադարի պայմանագիր է եղել, բայց հարձակումները շարունակվում են: Հայ զինվորները կանգնած են անզիջում պայքարի առաջ: Արմենաֆոբիան շարունակվում է: Ադրբեջանի կառավարության քաղաքականությունը անհոգի ժխտում է: Տարածաշրջանի խաղաղությունը չպետք է այսպիսի գին պահանջի: Արցախի ինքնիշխանությունը մի գիծ է, որը մենք չենք կարող խախտել: Այս շրջափակումը հակասում է մարդասիրության բոլոր օրենքներին»,-հավելել է նա:

Հավելենք, որ բանաստեղծական ոճով իր գրառման մեջ Աճեմյանը շեշտել է՝ հայերը շարունակում են մնալ միասնական եւ ուժեղ՝ հանուն արդարության եւ ազատության եւ ի հեճուկս բոլոր սխալների:

«ՕՍԿԱՐ»-Ի ՀԱՎԱԿՆՈՐԴԸ

Հայաստանը 2024 թվականի «Լավագույն միջազգային խաղարկային ֆիլմ» անվանակարգում «Օսկարի» հավակնորդ է ընտրել «Ամերիկացի» ֆիլմը: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է Armenian Film Society-ի ֆեյսբուքյան էջից:

Ֆիլմի սցենարիստն ու ռեժիսորը Մայքլ Գուրջյանն է: «Ամերիկացի»-ն այժմ ցուցադրվում է Լոս Անջելեսի եւ Նյու Յորքի կինոթատրոններում: Ֆիլմի պրոդյուսերը People of Ar Productions ընկերությունն է:

«Ոչինչ չի կարող ինձ էլ ավելի մեծ հպարտություն պարգեւել, քան այն, որ ներկայացնելու եմ հայկական կինոն եւ օգնելու եմ լույս սփռել մեր փոքրիկ երկրի հսկայական տաղանդի վրա», - ասել է Միքայել Գուրջյանը:

Հավելենք, որ «Օսկար»-ի մրցանակաբաշխությունը տեղի կունենա մարտի 10-ին, իսկ անվանակարգերը կհայտարարվեն 2024 թվականի հունվարի 23-ին:

ՍՊՈՐՏ

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՆ ՀԱՂԹԵՑ

«Եվրո-2024»-ի ընտրական մրցաշարի վեցերորդ տուրի խաղում Պորտուգալիայի հավաքականը տարել է ամենախոշոր հաշվով հաղթանակն իր պատմության մեջ:

Պորտուգալացիները 9:0 հաշվով պարտության էին մատնել Լյուքսեմբուրգի թիմին:

1994 եւ 1999 թվականներին Պորտուգալիան երկու անգամ 8:0 հաշվով հաղթել էր Լիխտենշտեյնին, 2003 թվականին 8:0 հաշվով պարտության էր մատնել Քուվեյթի թիմին:

«Եվրո-2024»-ի ընտրական մրցաշարի J խմբում Պորտուգալիան 6 խաղում վաստակել է տասնութ միավոր եւ առաջինն է: Պորտուգալացիները 24 գոլ են խփել, ոչ մի գոլ բաց չեն թողել:

Որակազրկման պատճառով Լյուքսեմբուրգի դեմ խաղը բաց թողեց Սաուդյան Արաբիայի «Ալ Նասրի» երեսունութամյա հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն:

ՀԵՌԱՑԱՎ ՊԱՇՏՈՆԻՑ

Հիսունվեցամյա ռուսաստանցի մասնագետ Ալեքսանդր Գրիգորյանը հեռացել է ռուսական «Կուբանի» գլխավոր մարզիչի պաշտոնից. այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ակումբի մամուլի ծառայությունից:

«Հեռանում եմ, որպեսզի ճանապարհ ազատեմ «Կուբանին» ինչ-որ բան տալու հնարավորություն եւ կարողություն ունեցող մարդու»,- ասել է մարզիչը:

Գրիգորյանն այս տարվա մայիսին էր գլխավորել թիմը: Ռուսաստանի առաջին լիգայի առաջնության ինը տուրից հետո «Կուբանը» 5 միավորով նախավերջին տեղում է:

ՆՎԱՃՈՒՄՆԵՐ՝ ԾԱՆՐԱՄԱՐՏՈՒՄ

Հայաստանի ծանրամարտի հավաքականի անդամ Անդրանիկ Կարապետյանն աշխարհի առաջնությունում դարձավ փոքր ոսկե մեդալակիր:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ Սաուդյան Արաբիայում ընթացող ծանրամարտի աշխարհի առաջնության 89 կգ քաշային կարգի տղամարդկանց պայքարում Հայաստանի հավաքականի անդամ Անդրանիկ Կարապետյանը «Պոկում» վարժությունում նախ բարձրացրեց 150 կիլոգրամ ու այնուհետ՝ 175 կիլոգրամ:

Այս վարժությունում նա նվաճեց փոքր ոսկե մեդալ: «Հրում» վարժությունում հայ ծանրորդը երկու մոտեցմամբ բարձրացրեց 192 կիլոգրամ եւ 202 կիլոգրամ: Երկամարտի 377 կգ արդյունքում նա չորրորդն է:

Մինչ այս Հայաստանի հավաքականի կազմում վաթսունյոթ կիլոգրամ քաշում Գոռ Սահակյանը դարձել էր ԱԱ-ի բրոնզե մեդալակիր, իսկ Ռաֆիկ Հարությունյանը նվաճել է փոքր բրոնզե մեդալ:

● Սեպտեմբերի 14-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Գիշատիչների խնջույքը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 4000 դրամ:

ԵՂԵ՞Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարող եմ անել, եթե ջրաչափը կասկածի տեղիք է տալիս:

Պետրոս Ղուկասյան (31 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Նման դեպքում հարկ է դիմել Բաժանորդների սպասարկման գրասենյակ կամ զանգահարել «Հեռախոսային կենտրոն»՝ ջրաչափի արտահերթ ստուգաչափման համար:

Իսկ գրավոր կարելի է դիմում ներկայացնել կայքի «Հետադարձ կապ» բաժնի եւ am.water.com.all@veolia.com էլեկտրոնային փոստի միջոցով:

Ջրաչափի ստուգաչափումն իրականացնում է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ն՝ իր հաշվին՝ բացառությամբ այն դեպքի, երբ բաժանորդի նախաձեռնությամբ ջրաչափի արտահերթ ստուգաչափման արդյունքում ջրաչափի խախտում չի արձանագրվել:

«Վեոլիա ջուր»

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե բաժանորդի նախաձեռնությամբ ջրաչափի արտահերթ ստուգաչափման արդյունքում ջրաչափի խախտում է արձանագրվել, ապա բաժանորդը պարտավոր է հատուցել ստուգաչափման հետ կապված անհրաժեշտ ծախսերը՝ Չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությունը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ես երկքաղաքացիություն ունեմ. ո՞ր երկրի ազգային կոմիտեին պետք է հայտադիմումս ներկայացնեմ, որպեսզի ընդունվեմ UWC:

Լեոնիկ Սուքիասյան (20 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. UWC ընդունվելու նպատակով Դուք կարող եք դիմել միայն մեկ ազգային կոմիտեի՝ անկախ Ձեր ունեցած քաղաքացիությունների քանակից:

Ձեր առաջին ելակետը պետք է լինի բնակության ներկայիս երկրի ազգային կոմիտեն, քանի որ թեկնածությունների ընտրության գրեթե բոլոր գործընթացները պահանջելու են Ձեր անմիջական ներկայությունը:

UWC Հայաստան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայաստանի ազգային հանձնաժողովի միջոցով UWC քոլեջ ընդունվելու համար հարկավոր է դիմել, եթե սովորում եք Հայաստանի միջնակարգ դպրոցում կամ ավագ ուսումնական հաստատությունում: Համալսարանի ուսանողներն իրավասու չեն դիմելու:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Եվրատեսիլյան երկրպագուների կողմից ստեղծված միջազգային Eurovoix կայքը մրցույթի 2023 թ.-ի մասնակիցներին գեղեցիկ պատկերազարդումներով է ներկայացրել: Ըստ կայքի՝ յուրաքանչյուր մասնակից պատկերված է իր երկրի խորհրդանիշ համարվող կենդանու կողքին:

Նկարազարդումների շարքը բացում է Հայաստանի ներկայացուցիչ Բրյունետը, որին պատկերել են արծվի հետ: Կայքը գրում է, որ երգչուհին Հայաստանը ներկայացնում էր իր հեղինակային Future Lover երգով, որով զբաղեցրել է մրցույթի 14-րդ հորիզոնականը՝ հավաքելով 122 միավոր: «Բրյունետը պատկերված է Հայաստանի խորհրդանիշ համարվող կենդանու՝ ոսկեգույն արծվի հետ»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	+3 +8 +16 +18
Կոտայքի լեռներ	+3 +7 +15 +17
Կոտայքի նախալեռներ	+9 +12 +18 +22
Գեղարքունիք	+3 +7 +14 +18
Լոռի	+3 +8 +16 +19
Տավուշ	+6 +12 +18 +21
Արագածոտնի լեռներ	+3 +7 +13 +18
Արագածոտնի նախալեռներ	+9 +12 +19 +23
Արարատ	+11 +14 +22 +26
Արմավիր	+10 +13 +23 +26
Վայոց ձորի լեռներ	+3 +7 +14 +17
Վայոց ձորի նախալեռներ	+11 +13 +19 +22
Սյունիքի հովիտներ	+14 +17 +18 +22
Սյունիքի նախալեռներ	+7 +11 +13 +16
ԼՂՀ	+14 +17 +18 +22
Երեւան	+13 +15 +22 +24

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086 տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.9.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*